ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1957 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում հանգամանորեն լսվեց Վեհափառ Հայրապետի հաղորդումը Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի շուրջ տեղի ունեցող վերջին իրադարձությունների շուրջ։

Վերջերս ստացված թղթակցությունների և տեղեկությունների լույսի տակ, Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետից՝ մի նոր հեռագիր ուղարկել Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանին, վերջին նախազգուշացումով, վերջ դնելու Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց վանքի և միաբանության դեմ ուղղված բոլոր տեսակի իր ձեռնարկումներին և ըստ իր խոստման՝ քաշվելու բոլոր գործերից։

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում խորին գոհունակությամբ լսվեց Վեհափառ Հայրապետի հաղորդումը Վեհարանի նոր շենքի կառավարության կողմից Մայր Աթոռին վերադարձվելու մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը խորին երախտագիտությամբ արձանագրեց Սովետական կառավարության այս բարյացակամ վերաբերմունքը Մայր Աթոռի հանդեպ, որը մի անգամ ևս արտահայտվում է Վեհարանի նոր շենքի հանձնումով։

1957 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում գոհունակությամբ լսվեց Վեհափառ Հայրապետի հաղորդումը Հայկական ՍՍՌ Պետական պատկերասրահից և Բնագիտական թանգարանից Մայր Աթոռին հանձնվելիք սրբապատկերների և եկեղեցական այլ իրերի մասին։

Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն նիստում Վեհափառ Հայրապետը հանգամանորեն խոսեց Մայր Աթոռի տպարանի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին՝ տպարանի հանգանակիչ հանձնաժողովի նախագահ պ. Երվանդ Աղաճանյանից ստացված վերջին մխիթարական և ուրախալի տեղեկությունների հիման վրա։

Մայր Աթոռի տպարանի համար Ամերիկայի Միացյալ Նահանգներում հանգանակված է 120000 դոլար, և բարի ցանկություն ու հնարավորություն կա այդ գումարը հասցնելու 150000 դոլարի։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը սրախտագիտությամբ նշեց Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարության բարյացակամությունը Մայր Աթոռի տպարանի մասին առ այն, որ

1) Մայր Աթոռի տպարանին իրավունք է տրվում բոլոր անհրաժեշտ մեքենաներն ու սարքը արտասահմանից ներածել Ս. Էջմիածին՝ առանց մաքսի։

2) Մայր Աթոռի տպարանին իրավունք է տրվում, տպարանական իր բոլոր ծախսերը հոգալու համար, ընդունել տպագրական պատվերներ նաև զանազան գիտական հիմնարկներից՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայից, Մատենադարանից, Պետական թանգարանից և այլ ուսումնական և գիտական հաստատություններից հայագիտական, պատմա-բանասիրական, գեղարվեստական երկերի և աշխատությունների հրատարակության։

Փետրվարի 22-ի իր սույն նիստում Գերագույն Հոգևոր Խորհուրդը զբաղվեց նաև Եղիշի արքեպիսկոպոս Տերտերյանի հարցով։